

ԻՏՍԼԻՈՅ ՀԱՅՈՑ ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ

Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Շաբաթ, 21 Ապրիլ 2007-ին, Հայկական Յեղասպանության 92-ամեակին առիթով տեղի ունեցավ միջեկեղեցական բանախօսություն-երեկոյ: Ան կազմակերպուած էր Ի-տալիոյ հայոց Հոգեւոր Հովուութեան ու Միլանոյի Քրիստոնէական Եկեղեցիներու Խորհուրդի համագործակցութեամբ: Բանախօսութեան նիստը բացուեցաւ ատենա-պետութեամբ պրն Տիգրան Երեցիանի: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ Թուրքիոյ ներկայ պետութեան կողմէ եղած ժխտողական ամէն փորձ ու կեցուածք, այսօր եւս կրնանք համարել որպէս շարունակութիւն 1915 թուականին եղած ցեղասպանութեան:

Երեկոյի առաջին բանախօսն էր Միլանոյի Քրիստոնէական Եկեղեցիներու Խոր-հուրդի նախագահ Տ. Դրայեան Վալդմանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ ինչպէ՞ս կա-րելի է այսօր հաշտուիլ պատմութեան այդ էջերուն, որոնք կը փաստեն հայ ազգի դէմ կատարուած աղետները: Պէտք է որ Թուրքիան սրբազրէ մարդկութեան դէմ իր գոր-ծած անցեալի անուրանալի ոճիրը: Ան իր խօսքին վերջաւորութեան եւս յիշեց Մեծ Ե-ղեռնը եւ կոչ ուղղեց անոր արդար լուծում տալու հրամայականը միջազգայնօրէն ու-շադրութեան առարկայ դարձնելու:

Երկրորդ բանախօսութիւնը նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան պատճառնե-րուն եւ ընթացքին: Բանախօսն էր Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւ Տ. Առէն վրդ. Շահի-նեանը: Ան ներկայացուց Յեղասպանութիւնը սկսեալ 1878 թուականէն մինչեւ 1922 թուականը, ցոյց տալով որ Հայկական Յեղասպանութեան գործընթացքը շարունակո-ւած է աւելի քան չորս տասնամեակներ եւ գործադրուած է թուրքական տարբեր վար-չակարգերու կողմէ, որոնք մէկը միւսին կը ժառանգէին հայասպանութեան գործը: Ա-պա, ան կոչ ուղղեց համայն մարդկութեան, որպէսզի պայքարին ժխտողական կեցո-ւածքին դէմ:

Երրորդ բանախօսութիւնը նուիրուած էր Հայկական Յեղասպանութեան հարցին եւ Հռոմեական Կաթողիկէ Եկեղեցւոյ կեցուածքին 1915 թուականին: Բանախօսն էր Սրբոց Առաքելոց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Տարչիզիոյ Բովէ: Ան իր խօսքին մէջ յի-շեց որ թուրքերը, որոնք գործադրեցին Հայկական Յեղասպանութիւնը սկսեալ 1878 թուականէն մինչեւ 1922 թուականը, Կաթողիկէ Եկեղեցին դէմ կանգնեցաւ 1915-1918 կատարուած ջարդին եւ դատապարտեց զայն, սակայն ինչպէս անցեալին այսօր եւս թուրքերը ամէն միջոց ի գործ կը դնեն ժխտելու անոր իրողութիւնը եւ մերժելու բոլոր փաստերը:

Նիստի աւարտին մասնակցողներուն առիթ տրուեցաւ իրենց կարծիքներն ու ա-ռաջարկները ներկայացնելու:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 23-ին Վատիկանում, Երջանկահիշատակ Գաբրիէլ Ա Կաթողիկոսի՝ լուսահոգի Հովհաննէս-Պողոս Բ Պապին նվիրած հայկական խաչքա-